Վ. Գ. ԲԵԼԻՆՍԿՈՒ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱԼՈՅԱՆ Լ.Ա.

Վիսարիոն Բելինսկին մի ամբողջ դարաշրջան է բնութագրում, չնայած ապրել և ստեղծագործել է մի շրջանում, երբ ռազնոչինական շարժումն էր առաջնայինը, նա նոր էպոխայի գաղափարախոսը և հեղափոխական դեմոկրատիայի տրիբունը դարձավ: Նրա գործունեությունն անխզելիորեն կապված է ռուսական մամուլի հետ: Նա բարձր էր գնահատում մամուլի, հատկապես ռուսական մամուլի դերը: «Մեզ համար,- գրում է մեծ քննադատը,- ամսագիրն ամեն ինչ է: Աշխարհում ոչ մի տեղ այն ձեռք չի բերել այնպիսի մեծ նշանակություն, ինչպիսին մեզանում…»[1]: Բելինսկին ելույթ էր ունենում որպես քննադատ, գրականության պատմաբան և տեսաբան, և ոչ թե նրա համար, որ գրաքննադատությունը նրա մղումն էր, այլ որովհետև միայն այդ կարգի հոդվածներում էր հնարավոր անցկացնել իրեն հուզող մտքերը. «Եթե դուք իմանայիք, թե որքան է դժվար ինձ համար անընդհատ կրկնել նույնը, խոսել միայն Լերմոնտովի, Գոգոլի, Պուշկինի մասին: Չհանդգնել երբեք դուրս գալ որոշակի սահմաններից, միայն արվեստ ու արվեստ: Դե, ես ինչ գրաքննադատ եմ: Ես ծնվել եմ որպես պամֆլետիստ, բայց չեմ կարողանում որևէ խոսք ասել հոգումս կուտակված տվայտանքների մասին, որից մարդու սիրտն է ցավում»[2]:

Երկար տարիներ աշխատելով մամուլում՝ նա կարողացել էր որոշակի ձև մշակել գրաքննությանը մոլորեցնելու հարցերում: Իսկ ընթերցողներն արդեն հասկանում էին տողատակում արտահայտված մտքերը: Գրաքննադատությունն ու հրապարակախոսությունը միահյուսելով՝ նա նոր ուղի բացեց Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Պիսարևի համար և գրաքննադատության ժանրը հասցրեց արվեստի մակարդակի: Բելինսկու գործունեությունը բաժանվում է երկու շրջանի՝ մոսկովյան (1830-ական թվականներ) և պետերբուրգյան (1840-ական թվականներ): Դեռևս 1831 թ. Մոսկվայի Լիստոկ» թերթում նա տպագրեց իր առաջին քննադատական հոդվածը Պուշկինի «Բորիս Գոդունովի» մասին:

1830-ականներին նա հանդես է գալիս որպես դեմոկրատ-լուսավորիչ՝ պայքարելով ճորտատիրական կարգերի դեմ, անհատի ազատության համար: Տասնամյակի կեսերին զարգացնում էր ռեալիզմի իր տեսությունը: Հետևելով Հեգելի փիլիսոփայությանը՝ այն միտքն էր արծարծում, թե հասարակության զարգացումը պատմական գործընթաց է, և, որ անհատները նրա վրա ազդելու հնարավորություն չունեն, որ պատմության տրամաբանությունն ավելի հզոր է, քան անհատների ցանկությունը: Ուրեմն, իրականության դեմ պայքարելն անհեթեթություն է: Բայց քանի որ պատմության ընթացքով է որոշվում ամեն ինչ,

---

[1] **Բելինսկի Վ.,** Երկեր, հ. 1, Ե., 1963, էջ 147:

[2] Նույն տեղում, էջ 152:

ուրեմն պատմությունն էլ կհաղթի սուբյեկտիվիզմին: Սա, իհարկե, քաղաքական մոլորություն էր:

Այսպես սկսվեց Վ. Բելինսկու գործունեության երկրորդ շրջանը. նա իր բոլոր ուժերն ուղղում է ընթերցողի մեջ դաստիարակելու հասարակական-քաղաքական և գեղագիտական հայացքներ: 1834 թ., երբ Նադեժդինի «Մոլվայում» տպագրվեց նրա «Գրական երազանքները», բոլորը հասկացան, որ գրաքննադատության և ժուռնալիստիկայի բնագավառ է եկել մի մարդ, որը նոր ասելիք ունի:

Իհարկե, մինչև Բելինսկին էլ ռուս առաջավոր շատ մտածողներ էին դնում այն հարցը, թե ռուս գրականությունը որպես այդպիսին չկա, բայց նա առաջ էր տանում այդ գաղափարը և գրում, թե այնքան դատարկ ու վայրենի է գրականության միջավայրը, որ կասկածում ես նաև նրա ապագային: Գրականություն չունենք, ասում էր Վ. Բելինսկին, բայց ունենալու համար պետք է մաքրենք այն ճանապարհը, որ կանխանշում է գրականության ապագան: Նա հավատում էր գրականության ապագային, ահա ինչու այդպես խստորեն էր մերժում անցյալի և ներկայի գրականությունը: Եթե Նադեժդինը տաղանդավոր ժխտող էր, Բելինսկին հանկարծ Պուշկինի և Կռիլովի անունների կողքին վեր հանեց Գոգոլի և Կոլցովի անունները՝ դրանով իսկ հավատալով ռուս գրականության ապագային: Իսկ արդեն 1835-ին տպագրած «Բենեդիկտովի բանաստեղծությունները» հոդվածում ցույց է տալիս, որ 1830-ականների այդ ամենամոդայիկ բանաստեղծի ստեղծագործությունների մեջ բացակայում են և՛ միտքը, և՛ զգացմունքը, և՛ իսկական գեղարվեստականությունը:

Ռեալիզմի դիրքերից է նա գնահատում Բեստուժև-Մառլինսկու վիպակները, որոնք մեծ ընդունելության էին արժանացել 1830-ական թվականներին: Ըստ նրա, այդ վիպակները առաջադիմական էին 20-ական թվականներին, բայց երբ գրականություն եկավ գոգոլյան ուղղությունը, սրանք դարձան ժամանակավրեպ: Հենց «Տելեսկոպի» և «Մոլվայի» շրջանում էլ Բելինսկին ստեղծեց լրագրողական իր ուղղությունը: Ճիշտ է, մինչև Բելինսկին այդ թեմայով աշխատում էր Պոլևոյը, բայց Բելինսկին, որպես հեղափոխական դեմոկրատ, կարողացավ ստեղծել ժուռնալիստիկայի մասին իր գիտությունը: Նա առաջինը խոսեց թերթերի և ամսագրերի տարբերության, դրանց բաժինների անհրաժեշտության մասին, վերջապես վեր հանեց ձևի և բովանդակության հարցերը:

1831-ին Ն. Նադեժդինը սկսեց հրատարակել «Տելեսկոպ» ամսագիրը և դրան կից «Մոլվա» թերթը մինչև 1836թ: «Տելեսկոպը» սկզբում երկշաբաթյա հանդես էր, իսկ 1834-ից շաբաթը մեկ անգամ էր լույս տեսնում, իսկ «Մոլվան»՝ շաբաթը մի քանի անգամ: Պարբերականները հրապարակվեցին 1831-ի հունվարից մինչև 1836-ի հոկտեմբերը, որ կարելի է բաժանել երեք շրջանի: Առաջին շրջանում չորս տարի խմբագիր էր Նադեժդինը, երկրորդ շրջանում (1835-ի հունվարից մինչև դեկտեմբեր) այն խմբագրում էր Բելինսկին: Երրորդում խմբագիրը կրկին Նադեժդինն էր (որը վերադարձել էր արտասահմանից), Բելինսկու ակտիվ մասնակցությամբ, մինչև «Տելեսկոպի» փակումը, երբ տպագրվեց Պ. Չաադաևի «Փիլիսոփայական տեսությունը»: Բայց չնայած Նադեժդինը խմբագրում էր այդ երկու օրգանները, Ռուսաստանի նահանգներում շրջելիս այն թողնում էր Բելինսկուն, որն իր

համալսարանական ընկերոջ՝ Վ. Տեժևիչի հետ խմբագրում էր դրանք: Նադեժդինը, ըստ Չերնիշևսկու բնութագրման, հայտարարում էր, որ իսկական իմաստով գրականություն դեռևս չկա, որովհետև ռոմանտիկական ուղղությամբ խծբծանքներ են դրանք, իսկ ռոմանտիզմը իսկական գրականություն ստեղծելու համար հիմքեր չունի: Այս իմաստով էլ նրա դերը դրական է գնահատվում ռուս գրականության մեջ, որն ուղիներ էր բացում ռեալիստական արվեստի համար: Նա գտնում էր, որ ռոմանտիկների նման ոչ թե պետք է նկարագրել մարդուն սարսափեցնող, մոլորության մեջ գցող դեպքեր, այլ այնպիսիք, որոնք երջանկություն են բերում ընթերցողին: Սակայն Նադեժդինի՝ գրականության նկատմամբ ունեցած գրական ծրագիրն էլ երկփեղկված էր, և սա նկատել է Բելինսկին: Նա իր ժամանակի համար շատ համարձակ միտք էր արտահայտում, թե պոեզիան պետք է կյանքը նկարագրի ինչպես որ կա, բայց և իրեն ժխտում էր, երբ գրում էր, թե պետք է խոսել միայն ուրախ դեպքերի, ուրախ կյանքի մասին: Չերնիշևսկին ճիշտ է նկատում, որ Նադեժդինը գրականության ռոմանտիկական և կլասիցիստական ուղղությունները մերժող էր, բայց և նոր ուղղություն ստեղծող չէր: Մի գործ, որ արեց միայն Բելինսկին: Նա նաև Բելինսկու նախորդը դարձավ այն իմաստով, որ առաջինը ռուս գրականության մեջ առաջ քաշեց գեղարվեստականության մեթոդի և նման այլ հարցեր, որոնց մասին մինչ այդ ռուս ընթերցողը չէր լսել: Նադեժդինի «Տելեսկոպի» յուրաքանչյուր համար բացվում էր փիլիսոփայության, գեղագիտության պատմության կամ աշխարհագրության վերաբերյալ գիտական որևէ հոդվածով: Այստեղ, բացի խմբագրից, տպագրվում էին պատմաբան Մ. Պավլովի, պրոֆեսոր Մ. Մաքսիմովիչի, Շևիրյովի և այլոց հոդվածները: Գիտական շատ հոդվածներ էին արտատպում նաև արտասահմանյան հանդեսներից Ն. Օգարյովի, Վ. Տեժևիչի թարգմանությամբ: Տպագրվում էին Տյուտչևի, Ակսակովի, Պանաևի ստեղծագործությունները, թարգմանություններ Բալզակից և այլն: Պետք է ասել, որ Նադեժդինը Կռիլովի, Գոգոլի, Զագոսկինի՝ ժողովրդի կյանքը նկարագրող ստեղծագործությունները ըմբռնում էր Ուվորովի նման՝ «ուղղափառություն, ինքնակալություն և ժողովրդայնություն» պաշտոնական գաղափարախոսության ոգով:

1831-1832 թվականներին «Տելեսկոպում» տպագրվում են մի շարք հոդվածներ, ուր քննադատվում է հեղափոխական Ֆրանսիան: Նրանք այնքան առաջ էին գնացել, որ նույնիսկ քննադատում էին ֆրանսիացի ռոմանտիկներ Կազիմիր Դելավինյային և Վ. Հյուգոյին, որոնց ստեղծագործություններում արտահայտվում էին ժամանակի հեղափոխական գաղափարները: Նադեժդինի հայացքներին շատ բնորոշ էր 1832 թ. N 6-ում տպագրված «Ֆրանսիայի ժամանակակից երգիծանքները» հոդվածը, որը նվիրված է Օգյուստ Բարբիեի ստեղծագործությանը: Բարբիեն հեղափոխական Ֆրանսիայի մեծ պոետ էր, որը գովերգում էր ժողովրդի քաջագործությունը և քննադատում բուրժուազիայի ծախվածությունը: Նադեժդինը գովաբանում էր պոետին, բայց ոչ թե նրա հեղափոխական մտքերի, այլ այն բանի համար, որ ձաղկում էր ֆրանսիական բուրժուազիային: Բայց այս քննադատությունները հակադիր եզրեր ունեին: Եթե Նադեժդինը քննադատում էր ֆրանսիական բուրժուազիային՝ երկրում ֆեոդալական կարգերը տապալելու

համար, ապա Բարբիեն դա անում էր, որովհետև բուրժուազիան այդ անելով դավաճանեց ժողովրդին:

Նույն կերպ էլ Նադեժդինը վերաբերվում էր Ռուսաստանի ներքին գործերին: Նա չփորձեց քննադատել կառավարությանը և միշտ էլ մնում էր բարեհուսության շրջանակում: Եվ հետաքրքիր է, որ հենց սկզբնական շրջանից Նադեժդինի համախոհները գրապայքար էին մղում Պոլևոյի «Տելեգրաֆի» դեմ՝ նրա խմբագրին անվանելով կոսմոպոլիտ, և դա տևեց մինչև 1835 թ., երբ հրատարակիչ դարձավ Բելինսկին: Բայց Նադեժդինը մշտապես դավանում էր պաշտոնական ժողովրդայնությունը և պայքարում էր Բուլգարին-Գրեչ զույգի գեղարվեստական գործերի ցածր մակարդակի, ուտիլիտարիզմի դեմ: Սրանից էլ օգտվեց Պուշկինը՝ «Տելեսկոպի» 1831 թ. N 13-ում տպագրելով իր երկու պամֆլետները՝ «Ֆեոֆիլակտ Կոսիչկին» կեղծանվամբ: Եվ եթե նույն թվականին ցարը շատ հավանեց և նույնիսկ բաժանորդագրվեց հանդեսին, ապա հաջորդ տարին նա կասկածանքով էր նայում Նադեժդինի գործունեությանը: Եվ ընթերցողների քանակն էր պակասում տարեցտարի, որովհետև Նադեժդինը շատ զբաղված գիտնական էր: 1834-ին նրանից հրաժարվեցին շատ ստեղծագործողներ՝ որոշելով ունենալ իրենց հրատարակությունը, և Նադեժդինն իր պարբերականին նորություն հաղորդելու համար ստիպված էր որպես գլխավոր աշխատակից հրավիրել Բելինսկուն: «Մոլվայում» տպագրելով Բելինսկու «Գրական երազանքներ» աշխատությունը (10 համարներում)՝ նա նորից ընթերցողներ հավաքեց և 1835 թ. որպես առանձին հրատարակություն այն հանձնեց Բելինսկուն: Այստեղ իր ուրույն տեղը գրավեց «Գրական ժամանակագրություն» բաժինը, որի հենց առաջին համարում նա հայտարարեց, որ հետևելու է Դերժավինի մի հավատամքին՝ «Կանգնել և ասել ճշմարտությունը»: Եվ երբ Նադեժդինը 1835 թ. հունիս-դեկտեմբեր ամիսներն անցկացրեց արտասահմանում, Բելինսկին տպագրվելու հրավիրեց իր գործընկերներ Ն. Ստանկևիչին, Մ. Բակունինին, Վ. Բոտկինին, երիտասարդ պոետներ Ա. Կոլցովին, Վ. Կրասովին, Կ. Ակսակովին, Պ. Կուդրյավցևին և ուրիշների: Հենց այս շրջանում էլ «Տելեսկոպի» ուշադրության առարկա դարձան արդեն քաղաքական և տնտեսական հարցերը: Բայց աշխուժացմանն ավելի շատ նպաստեցին մեծ քննադատի՝ N 7-8-ում տպագրած հոդվածները, որոնք վերաբերում էին Գոգոլի և Բարատինսկու ստեղծագործություններին: Սրվեց պայքարը նաև հետադեմ գործիչների դեմ, դրական խոսք ասվեց Ն. Պոլևոյի մասին:

Վերադառնալով արտասահմանից՝ Նադեժդինը չսահմանափակեց Բելինսկու հնարավորությունները:

Սպասվում էր, որ 1837-ին ընթերցողներն ավելի շատ կլինեն, բայց 1836 թ. N 15-ում տպագրված Չաադաևի «Փիլիսոփայական նամակների» համար փակվեցին և՛ «Տելեսկոպը», և՛ «Մոլվան». Չաադաևը պաշտոնապես հայտարարվեց խելագար, Նադեժդինին աքսորեցին Վոլոգդա, իսկ գրաքննադատ Բոլդիրևին ազատեցին աշխատանքից: Խուզարկության ժամանակ Բելինսկին Մոսկվայում չէր: Բայց խուզարկել էին նրա բնակարանը, իսկ երբ նա Մոսկվա էր վերադառնում, ճանապարհին ձերբակալեցին, սակայն կասկածելի ոչինչ չհայտնաբերեցին նրա մոտ: Այս պատճառով էլ Բելինսկին ազատվեց հետապնդումից: Նա զրկվեց իր

տպագիր օրգանից մինչև 1838-ի մարտը, երբ կարողացավ հրատարակել «Մոսկովսկի նաբլյուդատելը»:

Արդեն 1836 թ. N 1-4-ում Բելինսկին գրում է. «Ոչինչ ոչնչի մասին» ծրագրային հոդվածը, որտեղ ընդամենը մի քանի բառով որակում է Բուլգարինի և Գրեչի հրատարակությունը: Նա ոչինչ չի ցանկանում ասել նաև «Սին Օտեչեստվայի» մասին, որովհետև «Կան իրեր, որոնք միայն պետք է կոչել իրենց անունով, որպեսզի պարզ դառնա դրանց իսկական դեմքը»: Բելինսկին հավանում է Պուշկինի ,Սովրեմեննիկը», բայց ափսոսում է, որ տարեկան 4 համար լույս տեսնող այս հանդեսն ավելի շատ ալմանախ է հիշեցնում, մինչդեռ ավելի շատ պետք է տպագրվեր, որպեսզի ընթերցող ունենար: Ծանոթանալով Բելինսկու գրվածքին՝ Պուշկինը ցանկացավ նրան հանդիպել Մոսկվայում, բայց չհաջողվեց, որովհետև պոետը շտապում էր Պետերբուրգ: «Սովրեմեննիկի» երկրորդ համարի մասին արդեն Բելինսկին գրում է, որ այն դեպի արիստոկրատներն է մղվում, քանի որ Պուշկինը չի մասնակցել հրատարակությանը: Այս կարծիքին էր նաև Պուշկինը, ահա ինչու ցանկանում էր Բելինսկուն իր մոտ հրավիրել աշխատանքի: Բելինսկին էլ էր ցանկանում, բայց չհաջողվեց, որովհետև 1837 թ. Բելինսկուն սկզբից դիմեց Սանկտ Պետերբուրգից Ա. Կրաևսկին, որը դարձել էր «Ռոսիյսկի ինվալիդի» գրական հավելվածի խմբագիրը: Նրանց հունվար-փետրվար ամիսների նամակագրությունից պարզվում է, որ ամսագրում աշխատելու տարիուկես դադարը վատ էր ազդել Բելինսկու վրա, և նա մեծ ցանկություն ուներ նորից լրագրողական գործունեությամբ զբաղվելու, բայց նա նաև քննադատում էր Կրաևսկուն ավելորդ հաշտվողականության համար: Արդեն Նադեժդինի ամսագրում տպագրված «Մոսկովսկի նաբլյուդատելի» հասցեին քննադատական նյութերը խարխլել էին Անդրոսովի ժուռնալի հիմքերը, իսկ 1838 թ. փետրվարից նրանից հեռացան Շևիրյովը, Պոգոդինը, Պավլովը: Խմբագիրը ստիպված էր այն հանձնել տպարանի աշխատակից Ն. Ստեպանովին, որն էլ Բելինսկուն առաջարկեց դառնալ խմբագիր, պարբերականի փաստական տերը: Բելինսկին սիրով համաձայնեց: Պաշտոնապես խմբագիր դեռ համարվում էր Անդրոսովը, չնայած ոչ մի գործ չէր կատարում: Հանդեսի բոլոր գործերն ընկան Բելինսկու վրա, որը նաև հասցնում էր գրել: 1838-ի մարտից մինչև 1839-ի մայիս Բելինսկին մոտ 120 հոդված հրատարակեց: Այստեղ սկսեցին տպագրվել Մ. Բակունինը, Վ. Բոտկինը, Վ. Կրասովը, Կ. Ակսակովն ու այլք: Բաժինների հստակ աշխատանքը, նպատակաուղղվածությունը հարուցեցին Չերնիշևսկու հիացմունքը: Բելինսկին նոր բաժիններ բացեց՝ «Գրական խրոնիկա» և «Արտասահմանյան մատենագրություն»: Հենց այստեղ էլ նա հասցնում էր գրախոսել հանդեսների թարմ համարները: Նա ցնցող հարված է հասցնում Ն. Պոլևոյի՝ «Սին օտեչեստվայի» նոր խմբագրությամբ լույս տեսնող ամսագրին՝ գտնելով, որ նույնիսկ նրա նման մեծ մտածողն ու խմբագիրն ի վիճակի չէ փրկելու Վ. Բուլգարինի և Ն. Գրեչի հնաոճ հանդեսը: Սակայն իր՝ Բելինսկու քննադատական կեցվածքը ապահովություն չէր ներշնչում. նրանից հեռացան աշխատակիցները, գրաքննական կոմիտեն պատեհ և անպատեհ առիթներով միջամտում էր հանդեսի տպագրությանը, և 1839-ի մայիսին Բելինսկին նույնպես հեռանում է «Սովրեմեննիկից»:

1839-ի հուլիս-հոկտեմբեր ամիսներին Բելինսկին «Օտեչեստվեննիե զապիսկի» հանդեսի մոսկովյան թղթակիցն էր, իսկ հոկտեմբերին եկավ Պետերբուրգ և դարձավ գլխավոր աշխատակից՝ վարելով քննադատության և ժամանակակից մատենագրության բաժինները, միաժամանակ թղթակցելով «Լիտերատուրնայա գազետային»:

Բելինսկի լրագրողի տաղանդը փայլատակեց հենց պետերբուրգյան շրջանում: Մոսկվայում աշխատելիս արդեն ձևավորվել էր նրա ինքնատիպ ոճը, այնքան տարբեր իր ժամանակակիցներից, որ յուրաքանչյուր գրագետ մարդ, ստորագրեր Բելինսկին, թե ոչ, ճանաչում էր նրա գրվածքը: Նրա սկզբունքներից մեկն այն էր, թե քննադատն ու ընթերցողը զրուցակիցներ են: Քննադատ-հրապարակախոս Բելինսկուն բարձր են գնահատել Ա.Գերցենը, Ն. Դոբրոլյուբովը, Ե. Չերնիշևսկին, Դ. Պիսարևը:

1830-ական թվականներին կապիտալիստական հարաբերությունների ճնշման տակ թուլանում էր ճորտատիրության հիմքը: Նոր արդյունաբերական ձեռնարկություններ էին բացվում, ծաղկում էր արտաքին և ներքին առևտուրը, և սրա հետ միաժամանակ ժողովրդական լայն զանգվածների դժգոհությունն էր ավելանում: Նիկոլայ I-ը ստիպված էր պայքար մղել հեղափոխական մտավորականության դեմ: Այս շրջանն անվանել են ազնվական հեղափոխության շրջան: Ծայր առավ պայքարը հեղափոխական-դեմոկրատների և սլավոնաֆիլների միջև, որտեղ այս վերջինները հանդես էին գալիս «ռուսական համայնքի», պահպանողականության դիրքերից՝ ընդդեմ սոցիալիզմի և հեղափոխության:

Արդեն այս թվականներին Բելինսկին և Գերցենը դնում էին ժողովրդական հեղափոխության հարցը, իսկ լիբերալները միայն ռեֆորմների կողմնակիցներ էին: Եվ սրանց պայքարի արդյունքը դարձավ այն, որ 1846-ին Բելինսկին, Գերցենը, Նեկրասովն ու Պանաևը թողեցին «Օտեչեստվեննիե զապիսկին» և անցան «Սովրեմեննիկ», որից հետո վերջինս դարձավ հեղափոխական դեմոկրատիայի օրգան, իսկ «Օտեչեստվեննիե զապիսկին»՝ լիբերալ բուրժուազիայի տրիբուն:

Պուշկինը, Լերմոնտովը, Գոգոլը հիմք ստեղծեցին նոր գրական դպրոցի համար, որը ստացավ «նատուրալ» անվանումը, որն էլ ծնեց այնպիսի ճանաչված գրողների, ինչպիսիք են Տուրգենևը, Գերցենը, Նեկրասովը, Դոստոևսկին, Գոնչարովը, Սալտիկով-Շչեդրինը և ուրիշներ: Սրանց հիմնական ուղղությունը ռեալիզմն էր, որն արտահայտում էր իրականության ճշմարիտ պատկերը: Եվ եթե 1840-ականների սկզբին ռեալիզմը դեռևս թույլ էր արտահայտվում, ապա տասնամյակի կեսին նկատվեց բռնկումը, երբ իրար հաջորդելով՝ հրապարակ եկան Գերցենի «Ո՞վ է մեղավոր», Դոստոևսկու «Խեղճ մարդիկ», Տուրգենևի «Կալվածատերը», Նեկրասովի «Ճանապարհ», «Օրորոցային երգ», «Պետերբուրգյան անկյուններ» և այլ ստեղծագործություններ: Այս թվականներին էլ Նեկրասովը հրատարակեց իր հիանալի ալմանախները՝ «Պետերբուրգի ֆիզիոլոգիա» (1845թ.) և «Պետերբուրգյան հավաքածու» (1846թ.): Արդեն թղթակիցների կազմն էր ամեն ինչ ասում՝ Բելինսկի, Դոստոևսկի, Նեկրասով, Պանաև և ուրիշներ: Այստեղ հերոսները ժողովրդի միջից ելած անհատներն են, հասարակ գյուղացիները, ցածր խավի մարդիկ: Շատ մեծ տեղ էր տրվում նաև քննադատությանը: Առաջին իսկական գրապայքարը սկսվեց

Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոսի» և «Բանաստեղծությունների» հրատարակության հետ: Բելինսկին շատ ճիշտ գնահատեց այդ գործերը և Բուլգարինին և, Ն. Պոլևոյին հակառակ, հեղինակին դասեց Պուշկինի շարքը: 1843 թ., երբ Լերմոնտովի բանաստեղծությունները նորից հրատարակվեցին, Բելինսկին այս անգամ պայքարում էր Մենկովսկու հետ և պնդում, որ նրա յուրաքանչյուր ստեղծագործությունն ավելի լավն է, քան Յազիկովինը կամ Խոմյակովինը:

Բելինսկին պայքարում է նաև Գոգոլի «Մեռած հոգիներ»-ի համար, որը համարվում էր «զրպարտանք Ռուսաստանի հասցեին»: Սա պայքար էր ավելի շատ Ակսակովի հետ: Եվ երբ 1847 թ. լույս տեսավ Գոգոլի «Ընտիր տեղեր» նոր ստեղծագործությունը, որը հետադիմականները չափազանց լավ ընդունեցին, որովհետև գովաբանվում էր եկեղեցին, ճիպոտի քաղաքականությունը, Բելինսկին ջախջախեց այս գործը, չնայած միշտ էլ դրական էր արտահայտվել գրողի հին ստեղծագործությունների վերաբերյալ: Բելինսկու հասարակական հայացքները արժևորելու տեսակետից մեծ նշանակություն ունի Բելինսկու նամակը Գոգոլին:

«Օտեչեստվեննիե զապիսկի»-ն հրատարակել է չինովնիկ Սվինինը դեռևս 1818 թ.: Սա չնայած ընթերցող չուներ, բայց հրատարակվեց մինչև 1831 թ., երբ Սվինինն այդ իրավունքը վաճառեց Ա. Կրաևսկուն: Սա գրագետ մարդ էր և անմիջապես փոխեց հանդեսի տեսքը, 8 բաժին բացեց, հանրագիտարանային սկզբունքով, և սրա գործունեությանը թույլատրեց մասնակցել առաջավոր շատ գործիչների: Եվ 1839 թ. հունվարի 1-ից այն նորից լույս տեսավ՝ ձևափոխված: 1839 թ. օգոստոսից Բելինսկին տպագրվում է հանդեսում, իսկ հոկտեմբերից գալիս է Պետերբուրգ և դառնում բաժնի վարիչ: Շուտով նա աշխատանքի է հրավիրում Բոտկինին, ապա Օգարյովին, Գերցենին, Նեկրասովին, Տուրգենևին: Հանդեսը տպագրեց Լերմոնտովի համարյա բոլոր ստեղծագործությունները, ինչպես և Կոլցովի բնագրերը: Գերցենը կեղծանունով էր ստորագրում, իսկ Նադեժդինը փիլիսոփայական և գրական գործերով էր հանդես գալիս, ֆելիետոններ, քննադատական հոդվածներ էր գրում «Մոսկվիտյանինի» դեմ: Այստեղ են տպագրվել Տուրգենևի համարյա բոլոր գործերը: 1840-ից սկսեց աշխատել նաև Նեկրասովը, որը գեղարվեստական գործերից շատ տպագրում էր անստորագիր գրախոսություններ: Հանդեսում 40-ական թվականներին գրած իր բոլոր գործերն է տպագրել նաև Դոստոևսկին: Այստեղ սկսեցին 1847-ից տպագրվել Սալտիկով-Շչեդրինը, Օգարյովը, Ֆետը, Օդոևսկին և այլք: Եվ թարգմանչական գրականությունն է հարուստ՝ Ժորժ Սանդ, Դիկենս, Կուպեր, Հայնե: Քիչ չէին Բելինսկու քննադատական հոդվածները: Եվ եթե Կրաևսկին հանդեսի հաջողության մեջ տեսնում էր իր համար ցանկալի եկամտի աղբյուր, ապա Բելինսկին էլ ներկայացնում էր ճորտատիրության դեմ իր գաղափարները: «Օտեչեստվեննիե զապիսկին» պայքար էր մղում իր առաջավոր գաղափարների համար, դնում Ռուսաստանի՝ կապիտալիզմի ուղին անցնելու հարցը: Ամերիկայի մասին հոդվածներ տպագրելով՝ ցանկանում էր զարգացած տեսնել նաև հայրենական արդյունաբերությունը: Արևմուտքի զարգացումը տեսնելով՝ չէր անտեսում նաև հակասությունը, որ կար բանվորների և կապիտալիստների միջև, քննադատում էր բուրժուական դեմոկրատիան: Կապիտալիզմ քարոզելով՝ Գերցենը և Բելինսկին գտնում էին, որ այս շրջանից հետո է, որ Ռուսաս-

տանը պետք է անցնի սոցիալիզմին: Սոցիալիզմի գաղափարի համար էր, որ ամսագրի բոլոր բաժիններում էլ տպագրվում էր Թոմաս Մորի հանրահայտ գործը, որը հագեցած էր ուտոպիստական սոցիալիզմի գաղափարներով: Գերցենն էր տպագրում իր փիլիսոփայական գործերը, որտեղ նա համարյա հասել էր դեմոկրատական մատերիալիզմի գաղափարներին: Բելինսկին արդեն գրում էր «Արվեստը արվեստի համար» հայեցակետի դեմ և դնում իսկական ռեալիստ գրողների հարցը: Բուլգարին-Գրեչ-Մենկովսկի հետադիմական եռյակից բացի, նրանք ստիպված էին պայքարել նաև «Մայակ» և «Մոսկովիտյանին» նոր հրատարակությունների դեմ, որոնք Բելինսկուն անվանում էին ասպետ՝ առանց անվան, որովհետև նա չէր ստորագրում իր հոդվածները: 1842-ին Բելինսկին նրանց պատասխանում է իր «Պեդանտ» հոդվածով: Ազդեցիկ հոդվածներ տպագրեց նաև Գերցենը:

Իհարկե, հանդեսի հասցեին ուղղված նամակները դեպի երրորդ բաժանմունք գնալով ավելանում էին: Օրինակ, «Սևերնայա պչելան» նույնիսկ գրում էր, թե նրանք քարոզում են սոցիալիզմ, հեղափոխություն և անաստվածներ են: Եվ Կրաևսկին բարձր շրջանի հետ իր կապերը բազմիցս օգտագործել էր, որպեսզի պահպաներ ամսագրի տպագրությունը: Եվ ամսագիրը ձեռքից ձեռք էին խլում, երբ տեղեկանում էին, որ Բելինսկին որևէ հոդված է տպագրել: Սա հենց մեծ դեր խաղաց 60-ական թվականների հեղափոխական շարժման համար: 1847-ին «Սովրեմեննիկը» 4 հազար ընթերցող ուներ, «Մոսկովիտյանինը»՝ 300: 1846-ի ապրիլից Բելինսկին դադարեց աշխատել այս հանդեսում, իսկ պատճառները շատ էին:

Չնայած Կրաևսկին մեծ օգուտներ էր ստանում, սակայն շահագործում էր մեծ քննադատին՝ ստիպելով գրել նույնիսկ այնպիսի բաների մասին, որոնցից նա գաղափար իսկ չուներ: Բայց սա դեռ ոչինչ. նա՝ որպես խմբագիր, ուղղումներ էր անում Բելինսկու հոդվածներում, հանում էր բոլոր յուրօրինակ մտքերը, որոնք իրեն դուր չէին գալիս: Եվ 1847-ի հունվարից Բելինսկին տեղափոխվում է Նեկրասովի և Պանաևի հրատարակած «Սովրեմեննիկ» հանդես: Այստեղ աշխատանքի անցավ նաև Գերցենը: Եվ չնայած Կրաևսկին ընկավ ծանր կացության մեջ, բայց մնացած աշխատակիցները՝ Բոտկին, Կավելին, Գոլոխով, նույնիսկ ուրախ էին, որ այդ «անհանգիստ մարդը լքել է իրենց հանդեսը»: 1848-ին սկսվեց ռեակցիան Ռուսաստանում՝ կապված Արևմտյան Եվրոպայի 1848 թ. հեղափոխական դեպքերի հետ: Նիկոլայ I-ը Մենշիկովին հանձնարարեց ծանոթանալ ռուս ժուռնալիստների գործունեության հետ: Կրաևսկուն կանչեցին Երրորդ բաժանմունք, նրանից ստացան կամ կորզեցին այն հայտարարությունը, թե ինքը կդառնա կառավարության օրգան, և այս բոլորի մեղավորներն իր երիտասարդ աշխատակիցներն են: Դրանով նա հազիվ թե կարողանար նվաճել ընթերցողներին: Նիկոլայ I-ի մահից հետո, որքան էլ նա ցանկացավ նոր կյանք տալ հանդեսին, չհաջողվեց: Եվ չնայած 1859-ին տպագրեց Գոնչարովի «Օբլոմովը», սակայն չբարելավվեց հանդեսի դրությունը: 1868-ին նա ստիպված եղավ իր հանդեսը հանձնել Նեկրասովին և Սալտիկով-Շչեդրինին:

«Սովրեմեննիկը» հիմնադրել է Պուշկինը 1836թ., հետո այն անցնում է Պլետնյովին (Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր), որն ամսագիրը անմիջա-

պես հեռու պահեց բանավեճերից, հասարակական կյանքից և գրականությունից: Եվ 1846-ին, երբ այլևս համարյա ընթերցող չուներ, Պլետնյովը որոշեց այն վաճառել Նեկրասովին և Պանաևին: Վերափոխված հանդեսի առաջին համարը լույս տեսավ 1847-ի հունվարին: Ո՛չ Բելինսկին, ո՛չ էլ Նեկրասովն ու Պանաևը խմբագիր դառնալ չէին կարող, թույլտվություն ստանալ հնարավոր չէր, և խմբագրի պաշտոնում աշխատելու համար կանչեցին Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ա. Նիկիտենկոյին, որը նաև գրաքննադատ էր: Առաջին երկու տարին նա ոչ մի անգամ չմիջամտեց հանդեսի գործերին, և գաղափարական ղեկավարը Բելինսկին էր: Մեծ օգնություն էր ցույց տալիս Գերցենը: Նա «Ո՞վ է մեղավորի» երկրորդ կեսը տվեց տպագրելու, իսկ իր կինը դրամական օգնություն ցուցաբերեց Նեկրասովին՝ հանդեսը ձեռք բերելու համար: Բայց այլ կերպ վարվեցին Բելինսկու նախկին ընկերներ Բոտկինը, Կավելինը, Գրանովսկին, որոնք, «Սովրեմեննիկի» աշխատանքներին մասնակցելով հանդերձ, չէին հրաժարվում Կրաևսկու ժուռնալից: Նրանց բավարարում էր Կրաևսկու հանդեսի չափավոր-լիբերալ տոնը: «Սովրեմեննիկը» դարձավ հեղափոխական ժողովրդավարության հրատարակություն, որտեղ տեղ էին գտնում ժամանակի ամենատաղանդավոր ստեղծագործությունները: Այստեղ տպագրվեցին Բելինսկու «Հայացք 1846 թ. և 1847թ. ռուս գրականությանը», հոդվածները, որոնք զարկ տվեցին ռուս գրականության և հասարակական մտքի զարգացմանը:

Գրաքննադատական հոդվածներ տպեցին Նեկրասովը, երիտասարդ Մայկովը, Կրոնենբերգը: Գիտական հոդվածներ էին տպագրում Կավելինը, Սոլովյովը, Գրանովսկին: Լույս էին տեսնում աշխարհագրության, իրավաբանության, պատմության, աստղագիտության, քիմիայի մասին հետաքրքիր հոդվածներ: «Խառնուրդ» բաժնին էին պատկանում սոցիալքաղաքական ամենահրատապ հարցերը, որոնց թեմաներով հոդվածները հենց դեմ էին ցարի քաղաքականությանը, սլավոնաֆիլներին: Եվ հետաքրքրական է, որ, ճորտատիրությունը քննադատելով հանդերձ, Բելինսկին ու Գերցենը քննադատում էին նաև Եվրոպան՝ տեսնելով նաև նրա թերություններն ու արատները: Գերցենն առաջարկում էր տապալել բուրժուական կարգերը և հաստատել աշխատավորների պետություն: Բուլգարինը և բոլոր հետադեմ գործիչները պայքարում էին նրա դեմ: Մեծ չափերի էր հասել գրաքննության պատճառած վնասը: Իսկ 1848-ի հեղափոխական դեպքերից հետո ավելի ծանրացավ ամսագրի դրությունը: Գրաքննական ճնշումներից հետո Նիկիտենկոն ստիպված հեռացավ հանդեսից: Սակայն Նեկրասովն ու Պանաևը շարունակում էին իրենց գործը: 1848 թ. ապրիլին նրանք մեծ դժվարությամբ խմբագրի պաշտոնում հաստատեցին Պանաևին: Շատ բաներ էին մերժվում, այդ թվում նաև՝ նկարներով հավելվածը, որ պետք է հրատարակվեր ամսագրին կից:

Գրաքննական անհանդուրժողականության և ըմբոստ գաղափարների դեմ պաշտոնական անզիջում կեցվածքի այս պայմաններում մահացավ Վ. Բելինսկին՝ մի ամբողջ ուղղության առաջատարն ու ռուսական հեղափոխական դեմոկրատիայի գաղափարախոսը:

ЖУРНАЛИСТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ В. Г. ЕЛИНСКОГО

АЛОЯН Л. А.

Резюме

В 1830-х годах В. Г. Белинский выступал как демократ-просветитель, ратуя за свободу личности, свержение рабства и за утверждение реализма в литературе.

Русская общественно-политическая действительность наложила свой отпечаток как на творчество Белинского, так и на развитие русской общественной мысли.

Его деятельность неразрывно связана с русской периодической печатью, которую он высоко ценил. На страницах русской периодики он выступал и как критик, и как теоретик и историк литературы.

Доведя литературную критику до совершенства, он мастерски сочетал ее с жанром публицистики. Общественно-демократические взгляды Белинского нашли отражение на страницах русской периодической печати (“Современник”, “Телескоп”, “Московский наблюдатель” и т. д.).